

3568

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

# ՍՈՒՄԱԿՆ ՈՒ ՎԱՐԴԸ

Թարգմ. անգլիերէնից

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԷԼԻԱՆ

№ 42

ՀՐԱՅՈՐԱԳՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒՄԻ  
ՄԱՍԿԻՆ—1920

№ 42

82

Ու-13

22 NOV 2009

ՕՍԿԱՐ ՄԱՍԷԳ

ՍՈՒՅԱԿՆ ՈՒ ՎԱՐԴԷ

— Նա ինձ տասց, որ կպարի հետս,  
եթէ նրա համար կարմիր վարդ բերեմ,  
բացականչեց երիտասարդ Ուսանողը.—  
Այն ինչ իմ պարտիզում մի հատիկ կար-  
միր վարդ չկա:

Լսեց նրան իր, քարակաղնու վրայ շի-  
նած, բնից Սոխակը, և նայեց սաղարթներ  
միջից, ու գարմացաւ:

— Մի հատիկ կարմիր վարդ իմ ողջ  
պարտիզում, բացականչեց նա, և լցուե-  
ցին նրա չքնաղ աչքերն արտասուքներով:  
— Ո՛հ, ի՛նչ չնչին բանից է կախուած  
մարդու երջանկութիւնը: Ես կարդացել  
եմ ա՛յն ամենը, չնչ գրել են իմաստուն  
մարդիկ, և իմն են փրկութեամբ թա-  
րուր գաղանիքները, ա՛յժմ, մի հատիկ

կարմիր վարդ չունենալու պատճառով՝  
խորտակուած է իմ կեանքը:

— Ահա՛, վերջապէս, մի ճշմարիտ սիրահար, ասաց Սոխակը.— Ամեն գիշեր երգել եմ ես նրա մասին, թէ ես նրան չէի ճանաչում: Ամեն գիշեր արել եմ ես նրա պատմութիւնը ասողերին, և հիմա տեսայ ես նրան: Մուգ են նրա մազերը, ինչպէս յակինթը, և կարմիր են նրա շթուները, ինչպէս նրա որոնած վարդը, սակայն գունատուել է խանդից նրա դէմքը, ինչպէս փղոսկր, և իբր կնիքն է գրել վիշաք՝ նրա ճակատի վրայ:

— Պրինցը վաղը երեկոյեան պարահանդէս է տաքըում, շշնջաց երիտասարդ Ուստնողը.— Եւ կլինի իմ սիրուհին հիւրերի շարքում: Եթէ նրա համար կարմիր վարդ տանեմ՝ կպարի նա ինչ հետ մինչև լոյս: Եթէ նրա համար կարմիր վարդ տանեմ՝ նրան իմ թևը կառնեմ, և կթեքի նա իր գլուխը իմ սուրին, և կսեղմեմ ես նրա ձեռքը իմ մէջ: Բայց չկայ իմ պարտիզում մի հատիկ վարդ, ուստի ես պի-

տի նստեմ մենակ, և կանցնի նա իմ մօտից, նոյնիսկ ինձ չի՛ նայի, և իմ տէրը կփշրուի:

— Ահա՛, իսկապէս, ճշմարիտ սիրահար, ասաց Սոխակը.— Այն՝ ինչ երգում եմ, նա զգում է, ասին, ինչ բերկրանք է ինձ համար, նրա համար տառապանք է: Անշուշտ, տէրը հրաշալի է: Նա աւելի թանկ է, քան զմրուխտը, և շատ թանկ, քան մարգարիտը: Մարգարիտներով և նանկրով նրան չես տանի, և ոչ էլ կարելի է նրան ցուցադրել շուկայի մէջ: Գնել նրան չեն կարող վաճառականները, և ոչ էլ կշռել ոսկու նժարով:

— Կնստեն երաժիշտները գալլերէյում, ասաց երիտասարդ Ուստնողը.— Եւ կնուագեն լարաւօր գործիքների վրայ, և կպարի իմ սիրուհին քնարի ու չութակի ներդաշնակութեամբ: Կպարի նա արայէ՛ս թեթևաքայլ, որ չեն գիպէի նրա ոտները յատակին, և կխմրուեն նրա շուրջը պալատականները՝ իրենց շքեղ հագուստներով: Ի՞նչ ինչ հետ չի՛ պարի նա, որով-

հետե վարդ չեմ ունենայ նրան տալու, — ու ընկաւ նա խոտի վրայ, և ծածկեց ձեռներով իր դէմքը. ու լաց եղաւ:

— Ինչո՞ւ է լալիս, հարցրեց փոքրիկ Կանաչ Մողեղը, երբ, պոչը ցից, վազում էր նրա մօտով:

— Ճշմարիտ, ինչո՞ւ, ասաց Թիթեռնիկը, որ Թռչկոտում էր արևի շողի շուրջը:

— Ճշմարիտ, ինչո՞ւ, հարցրեց Մարգարտածաղիկը իր հարեանին մեղմ ու քնքոյշ շշուկով:

— Մի կարմիր վարդի համար է նա լալիս, ասաց Սոխակը:

— Մի կարմիր վարդի համար, բացականչեցին նրանք. — Շատ ծիծաղելի է, և փոքրիկ Մողեղը, որ մի քիչ ցինիկ էր, հրդեհու ծիծաղեց:

Միայն Սոխակը հասկացաւ Ուսանողի վշտի դադանիքը, և նստեց լռելիայն կաղնու ծառի վրայ, ու մտածեց Սիրույ խորհրդի մասին:

Մէկ էլ լանկարծ տարածեց իր գորշ

թևերն ու նետուեց օդի մէջ, նա սլացաւ պուրակի վրայով՝ ինչպէս մի ստուեր, և ստուերի պէս նա անցաւ պարտիզի վրայով:

Կանաչ արօտում մի չքնաղ վարդի ծառ կար, և երբ տեսաւ նա այդ ծառը՝ Թռաւ դէպի նա, ու նստեց նա նրա ճիւղերից մէկի վրայ:

— Ինչ մի կարմիր վարդ տուր, բացականչեց, — և կերդեմ քեզ իմ ամենից քաղցրալուր երգը:

Ու շարժեց Վարդենին իր գլուխը:

— Սպիտակ են իմ վարդերը, պատասխանեց. — Սպիտակ՝ ինչպէս ծովի փրփուր, և աւելի սպիտակ՝ քան լեռան գազթի ձիւնը: Սակայն՝ դնա՛ դու իմ եղբոր մօտ, որ բուսել է Արևի հնամեայ ժամացոյցի մօտ, և, Թերևս, տալ քեզ նա՛քը ուղածը:

Ու Թռաւ Սոխակը դէպ ան վարդենին, որ բսել էր Արևի հնամեայ ժամացոյցի մօտ:

— Ինչ մի կարմիր վարդ տուր, բաց

դականչեց.—Եւ կերդեմ քեզ իմ ամենից  
քաղցրալուր երգը:

Ու շարժեց Վարդենին իր գլուխը:

— Դեղին են իմ վարդերը, պատաս-  
խանեց.— Դեղին՝ ինչպէս մազերը ջրա-  
նուշի, որ բաղմած է սաթէ զահի վրայ,  
և աւելի գեղին՝ քան նարկիսը, որ ծաղ-  
կում է մարդում, մինչև որ կգայ խոտ-  
հարը իր սուր դերանդիով: Մական՝ դնա՛  
դու իմ կրօնը մօտ, որ բսել է Ուսանողի  
պատուհանի տակ, և, թերևս, տայ քեզ  
նա՝ քո ուղածը:

Ու թռաւ Սոխակը դէպ այն վարդե-  
նին, որ բսել էր Ուսանողի պատուհանի  
տակ:

— Ինչ մի կարմիր վա՛րդ տուր, բա-  
ցականչեց.— Եւ կերդեմ քեզ իմ ամենից  
քաղցրալուր երգը:

Ու շարժեց Վարդենին իր գլուխը:

— Կարմիր են իմ վարդերը, պատաս-  
խանեց.— Կարմիր՝ ինչպէս աղաւնու տո-  
ւիկները, և աւելի կարմիր՝ քան մարջա-  
նի մեծ հովհարները, որոնք ծածանւում

դն լար ուկեանի անձաւներում: Սակայն՝  
սառցրել է ձմեռն իմ երազները, և տա-  
րել է սառնամանիքն իմ բողբոջները, և  
փշրել է փոթորիկն իմ ճիւղերը, և այս  
տարեք, մինչև վերջ, մի հատիկ վարդ չը  
պիտի ունենամ:

— Մի հատիկ վա՛րդ՝ ահա իմ ողջ ու-  
ղածը, բացականչեց Սոխակը.— Միայն մի  
կարմիր վա՛րդ: Մի՞թէ ուրիշ հնար չկայ,  
որ ես դռնեմ:

— Կայ մի հնար, պատասխանեց Վար-  
դենին,— բայց դա այնքան դժուար է, որ  
չեմ համարձակւում քեզ առել:

— Առա՛ ինչ, բացականչեց Սոխակը,—  
եւ չեմ վախենում:

— Եթէ դու վա՛րդ ես ուզում, ասաց  
Վարդենին.— դու պիտի ստեղծես քո  
դալլալներից՝ լուսնի շողերի տակ, և ներ-  
կես՝ քո սեփական սրտի արիւնով: Դու  
պիտի երգես ինչ համար՝ կուրծքի փշի  
սեղմած: Ողջ դիշերը պիտի երգես ինչ  
համար, փուշս պիտի խոցի սիրտդ, և

կենդանի արիւնդ պիտի հոսի երակներէս մէջ և զառնայ իմ արիւնը:

— Մահը մեծ արժէք է՝ մի կարմիր վարդ գնելու համար, բացականչեց Սոխակը:— Եւ թանկ է կեանքը՝ բոլորի համար: Դուրեկան է՝ նստել կանաչ անտառում և դիտել Արևը՝ իր ոսկէ կառքի մէջ, ու Լուսինը՝ իր մարդարտէ կառքում: Անո՛ւշ է հրշակի բուրմունքը և անո՛ւշ՝ զանգակ-ժաղիկները, որոնք թափ են կենում հովիտներում, և հաւամրդերը, որոնք ծաղկում են բլուրներում: Բայց և այնպէս Սէրը աւելի լաւ է՝ քան Կեանքը, և քանի դրօշ արժէ մի թռչնի սիրտ, համեմատած մարդու սրտի հետ:

Ու տարածեց իր դրօշ թևերն, ու նետուեց օդի մէջ: Նա պլացաւ պարտիզի վրայով՝ ինչպէս մի ստուէր, և, ինչպէս մի ստուէր, նա անցաւ պուրակի վրայով:

Երիտասարդ Ուսանողը դեռ ևս պարկած էր խոտի վրայ, ուր թողել էր նրան Սոխակը, և դեռ ևս, չէին ցամաքել արտասունքները նրա չքնաղ աչքերում:

— Ուրախացի՛ր, բացականչեց Սոխակը:— Ուրախացի՛ր, կստանաս կարմիր վարդը: Կստեղծեմ ես նրան իմ դալլալներից՝ լուսնի շողի տակ, և կնեղեմ՝ իմ սեփական սրտի արիւնով: Մի բան, որի փոխարէնը խնդրում եմ ես քեզանից, զայն է՝ որ դու Ֆեաս անձնուէր սիրահար, որովհետև Սէրն աւելի իմաստուն է՝ քան Փիլիսոփայութիւնը, թէև Փիլիսոփայութիւնն էլ է իմաստուն, և աւելի հզոր՝ քան Իշխանութիւնը, թէև Իշխանութիւնն էլ է հզոր: Հրադոյն են նրա թևերը և հրավառ՝ նրա մարմինը: Նրա շրթունքները քաղցր են՝ մեղրի նման, և խնկահոտ է նրա շնչառութիւնը:

Ուսանողը նայեց նրան խոտի վրայից, և լսեց, բայց չհասկացաւ, թէ ի՞նչ է ստուծ Սոխակը, որովհետև նա դիտեց միայն այն՝ ինչ գրքերում էր գրուած:

Սակայն կաղնին հասկացաւ, և տրտմեց, որովհետև նա ստատիկ սիրում էր փոքրիկ Սոխակին, քի իր բունը նրա ճիւղեմի վրայ էր հիւսել:

— Երգիր ինձ քո վերջին երգը, շըշն-  
չաց նա,— Ես կարօտեիս եմ քեզ՝ երբ  
դու այլ ես չլինես:

Ու երգեց Սոխակը Կաղնուհն, և նման  
էր նրա ձայնը արծաթէ կօխի հոսող ջրի  
կարկանդակին:

Երբ նա աւարտեց իր երգը՝ Ուսանողը  
բարձրացաւ տեղից, և հանեց նկատողու-  
թեան տետրը ու մի մատիտ՝ գրաւանից:

— Նա ձեռն գիտէ, ասաց ինքն իրեն  
պուրակն անցնելիս.— Այդ չի՛ կարելի  
բացատրել. բայց, արդեօք, ունի՞ր զգաց-  
մունք: Վախենում եմ՝ որ ո՛չ Փաստօրէն  
նա նման է արուեստագէտներից շատե-  
րին. ամբողջովին արուեստ է՝ զուրկ որև  
է զգացմունքից: Նա ամենևին իրեն չի՛  
զոհի ուրիշի համար: Նա մտածում է լոկ  
երաժշտութեան մասին, լայն ինչ ամեն  
մարդ գիտէ, որ արուեստն եսասէր է:  
Յամենայն դէպս պիտի խոստովանեմ, որ  
ձայնի մէջը կան գեղեցիկ նօտեր: Ափսոս,  
որ այդ նօտերը ոչ մի իմաստ չունին, և ոչ  
էլ մի որևէ գործնական օգուտ են բերում:

Ու դնաց իր սենեակը, ու պարկեց իր  
փոքրիկ մահճակալի վրայ, և սկսեց խոր-  
հել իր սիրտ մասին. ու մի փոքր անց,  
քնով անցաւ:

Ու երբ Լուսինը շողաց երկնքում՝ Սո-  
խակը թռաւ Վարդենու մօտ ու սեղմեց  
կուրծքը նրա փշին: Ողջ դիշերն երգեց  
նա կուրծքը փշին սեղմած. ու թեքուել  
էր ցուրտ բիւրեղանման Լուսինն և ա-  
կանջ էր դնում: Ողջ դիշերն երգեց նա, և  
փուռն աւելի ու աւելի էր խօցւում նրա  
կրծքի խորքը, և կենդանի արիւնք հո-  
սում էր անտեղից:

Առաջ նա երգեց սիրտ ծագման մասին՝  
աղալի ու աղչիլայ որտեղում: Եւ Վար-  
դենու ամենաբարձր ճիւղի վրայ ծաղկեց  
մի չքնաղ վարդ՝ թերթիկ առ թերթիկ,  
երգ առ երգ: Սկզբում գօռնատ էր,  
ինչպէս մի մէգ, որ կախուած է գետի  
վրայ, գօռնատ՝ ինչպէս ցայգալուսի ու-  
ղին, և արծաթափայլ ինչպէս արշալուսի  
թևերը: Արծաթէ հալելու մէջ վարդի ցո-  
լոցմբ էր նման, լճակի մէջ վարդի ցո-

ացումի էր նման այն վարդը, որ ծաղկեց Վարդենու տմենարարձը ճիւղի վրայ: Իսկ Վարդենին կոչ էր անում Սոխակին, որ նա աւելի հուպ գայ իր փշին:

— Էլի՛ հուպ եկ, փոքրիկ Սոխակ, բացականցեց Վարդենին:— Թէ ոչ Օրը կը բացուի աւելի վաղ, քան վարդը պատրաստ կլինի:

Ու Սոխակն աւելի էր հպւում փշին, և հնչում էր նրա երգն աւելի ու աւելի բարձր, որովհետեւ նա երգում էր կըքի ծաղման ծասին՝ տղամարդու ու կոյսի հոգու մէջ:

Եւ մի քնքոյշ, վարդագոյն ներկ հոսեց վարդի թերթիկների մէջ, նման նորափետի շառագունած այտերին, երբ նա նորահարսի շրթունքներն է համբուրում. բայց փուշը զեռ ևս նրա օրտին չէր հասել, ուստի սպիտակ էր զեռ վարդի սիրտը, որովհետեւ միայն Սոխակի օրտի արիւնն էր կարող ներկել վարդի սիրտը:

Եւ Վարդենին կոչ արաւ Սոխակին, որ նա աւելի հուպ գայ իր փշին:

— Էլի՛ հուպ եկ, փոքրիկ Սոխակ, կանչում էր Վարդենին:— Թէ ոչ Օրը կը բացուի աւելի վաղ, քան վարդը պատրաստ կլինի:

Ու Սոխակն աւելի էր հպւում փշին, և հասաւ փուշը նրա սրտին, և ցաւի մի սուր խալթոց հարուածեց նրան: Քանի գնում աւելի զոռ էր հնչում երգը, որովհետեւ նա երգում էր սիրոյ մասին, որ զրօշմում է Մահով, Սիրոյ մասին, որ չի մեռնում գերեզմանում:

Եւ չքնաղ վարդն ալ կարմիր դոյն առաւ, արշալուսի վարդի նման: Ալ կարմիր էր թերթիկների պտակը, ալ կարմիր էր, ինչպէս սուտակ, նրա սիրտը:

Իսկ Սոխակի ձայնը քանի գնում նուազում էր, և թրպրտացին նրա փոքրիկ թերթիկները, և մթագնեցին նրա աչքերը: Քանի գնաց նուազեց նրա երգը, և նա զլաց, որ մի րան սեղմում է բուկը:

Ապա արձակեց մի վերջին դալլալ: Կաթնաման Լուսինը լսեց ու մոռացաւ լուսարացը՝ կանգ առաւ երկնականտրի

վրայ: Լսեց կարմիր վարդը, և սառսրաց ամբողջ մարմնով հրացքից, և արձակեց իր թերթիկներն առաւօտեան զով հովին: Իսկ արձագանքը տարաւ նրան իր լեռնային բոսոր քարանձաւը, և արթնացրեց քնած հովիւներին: Նա սահեց դետի և ղեգների վրայով, և եղեգները առան ու առլին ծովին:

— Տե՛ս, տե՛ս, բացականչեց Վարդենին.— Վարդն արդէն պատրաստ է: Բայց չպատասխանեց Սոխակը, որովհետեւ նա անչունչ ընկած էր խոտի վրայ՝ փուշը կրծքին:

Ու կէս օրին, բաց արաւ Ուսանողը իր պատուհանն ու դուրս նայեց:

— Պա՛հ, զարմանալի բան, բացականչեց.— ահա՛ մի կարմիր վարդ: Նմանը չեմ տեսել իմ ողջ կեանքում: Այնքան դեղեցիկ է, որ ես հաւատտի եմ՝ մի երկար Լատինական անուն ունի.— և կռայաւ ու կարեց վարդը:

Յետոյ զրեց գլխարկը, և վաղեց պրօֆէսորի տունը՝ վարդը ձեռքին:

Պրօֆէսորի աղջիկը նստել էր դռան առաջին և կապոյտ մետաքս էր մանուշակաբարակի վրայ, և պարկել էր նրա փոքրիկ շունը նրա ոտների տակը:

— Դուք ասացիք, որ կպարէք ինձ հետ, եթէ կարմիր վարդ բերեմ ձեզ Կամար, բացականչեց Ուսանողը.— Ս.հա ամենակարմիր վարդն աշխարհիս երեսին, կպցրէք այս երեկոյ ձեր օրտին մօտիկ, և երբ միասին պարելու լինենք, կպատմի նա ձեզ, թէ ինչպէ՛ս եմ սիրում ձեզ:

Իսկ աղջիկը խոժոռեց դէմքը:

— Վախենում եմ, որ չսազի իմ հագուստին, պատասխանեց.— Եւ բացի այդ, սենեկապետի քրոջ որդին ուղարկել է ինձ իսկական թանկագին քարեր, իսկ ամենքին յայտնի է, որ թանկագին քարերն աւելի արժեն, քան ծաղիկները:

— Ազնիւ թօսք, շատ ապերախտն էք, ասաց Ուսանողը զայրացած. և վարդը շարունակ փողօցր, ուր բնկաւ մի փոփ մէջ, և հառքի անիւք անցաւ վրայով:

— Ապերախտ, ասաց աղջիկը.— գի-



աէք, չափից գուրս կոպիտն էք. և, վեր-  
ջապէս, ինչացո՞ւ էք. լոկ մի ուստնոր.  
Չնմ էլ կարծում, որ, անգամ, արծաթէ  
չափրաստ ունենաք ձեր կոշկի վրայ, ինչ-  
պէս սենեկապետի քրոջ որդին՝

Եւ վեր կացաւ տթողից ու գնաց  
տուն:

— Ի՛նչ խելառ բան է Սէրը, ասաց  
Ուստնորը՝ հեռանալով.— Անգամ կիսով  
չափ օգտակար չէ Տրամարանութիւնից,  
որովհետեւ ոչինչ չի՝ ապացուցում, և  
մշտապէս ասում է ա՛յն, ինչ չի՝ իրադոր-  
ժւում, օտիպում է մարդուն հաւատալ  
այն բանին, որ գոյութիւն չունի: Իսկա-  
պէս, նա բոլորովին անդործնական է. և,  
որովհետեւ այս դարին զործնական է ա-  
մեն ինչ, ես կդառնամ զէպի Փիլիսոփայ-  
ութիւնն ու կսկսեմ ուսումնասիրել Մե-  
տաֆիզիկան:

Այսպէս վերադարձաւ իր սենեակը, և  
հանեց մի մեծ փոշոտած զիւրք, և սկսեց  
կարդալ: